ՆԱԽԱԳԻԾ 43

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ

ՈՐՈՇՈՒՄ

-Ա

ԱՍԻԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԳՅՈՒՂԱԿԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԱՀԱՏՎԱԾԻ ԾՐԱԳՐԻ» ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԱՆՏԱՌԱՄԵՋ-ԶՈՐԱՎԱՆՔ-ԴՊՐԱԲԱԿ-ԱՅԳՈՒՏ-ՄԱՐՏՈՒՆԻ-ԳԵՏԻԿ-ԹԹՈՒՋՈՒՐ-ՃԱՄԲԱՐԱԿ-ԱՂԲԵՐՔ-Մ14 ԱՎՏՈՃԱՆԱՊԱՐՀԻ ԿՄ15+240-ԻՑ ԿՄ48+725 ՀԱՏՎԱԾԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԳՆՄԱՆ ՄՐՑՈՒՅԹՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի դեկտեմբերի 22-ի "Օտարերկրյա պետությունների և միջազգային վարկատու կազմակերպությունների կողմից Հայաստանի Հանրապետությանը տրամադրվող վարկային և դրամաշնորհային միջոցների հաշվին ծրագրերի իրականացման միջոցառումների մասին" N 765 որոշման, Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

Հաստատել Ասիական Զարգացման Բանկի և Համաշխարհային Բանկի կողմից Հայաստանի Հանրապետությանը տրամադրվող վարկային և դրամաշնորհային միջոցների հաշվին իրականացվող Գյուղական ճանապարհահատվածի ծրագրի և Կենսական նշանակության ճանապարհների բարելավման ծրագրի կառավարման խորհրդի կողմից 2010 թվականի հոկտեմբերի 22-ին (Արձանագրություն N 13/10) հաստատված մրցույթների (լոտեր 1-6) արդյունքները՝ մրցույթի հաղթող ճանաչելով հետևյալ կազմակերպություններին ըստ լոտերի՝

1. Լոտ 1՝ "Իջևանի ՃՇՇ" ՓԲԸ, 546 931 027 ՀՀ դրամ պայմանագրային արժեքով
2. Լոտ 2՝ "Կապավոր" ՍՊԸ, 627 258 658 ՀՀ դրամ պայմանագրային արժեքով
3. Լոտ 3՝ "Կապավոր" ՍՊԸ, 528 304 306 ՀՀ դրամ պայմանագրային արժեքով
4. Լոտ 4 ՝ "ԱԱԲ Պրոեկտ" ՍՊԸ , 424 890 038 ՀՀ դրամ պայմանագրային արժեքով
5. Լոտ 5 "Խաչհար" ՍՊԸ, 689 998 759 ՀՀ դրամ պայմանագրային արժեքով
6. Լոտ 6՝ "Ճամբարակի ՃՇՇՁ"ԲԲԸ և "Խաչհար"ՍՊԸ համատեղ, 594 999 930 ՀՀ դրամ պայմանագրային արժեքով:

Մ. Վարդանյան

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Հայաստանի Հանրապետության կառավարության "Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող "Գյուղական ճանապարհահատվածի ծրագրի" շրջանակներում Անտառամեջ-Զորավանք-Դպրաբակ-Այգուտ-Մարտունի-Գետիկ-Թթուջուր-Ճամբարակ-Աղբերք-Մ14 ավտոճանապարհի կմ15+240-ից կմ48+725 հատվածի վերականգնման աշխատանքների գնման մրցույթների արդյունքները հաստատելու մասին" որոշման նախագծի ընդունման

1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)

Որոշման ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է Հայաստանի Հանրապետության Վարչապետի 2009 թվականի մարտի 25-ի N 251-Ա որոշմամբ հաստատված Ասիական Զարգացման Բանկի և Համաշխարհային Բանկի կողմից Հայաստանի Հանրապետությանը տրամադրվող վարկային և դրամաշնորհային միջոցների հաշվին իրականացվող Գյուղական ճանապարհահատվածի ծրագրի և Կենսական նշանակության ճանապարհների բարելավման ծրագրի կառավարման խորհրդի կանոնադրության 23 կետի դրույթով, այն է՝ "Մեկ միլիոն ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ և ավելի գումարով մրցույթների արդյունքները խորհրդի հաստատումից հետո ներկայացվում են Հայաստանի Հանրապետության կառավարություն, եթե վարկային պայմանագրով այլ պահանջներ կամ սահմանափակումներ նախատեսված չեն" :

1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները

2010 թվականի հոկտեմբերի 5-ին "Հայաստանի ավտոմոբիլային ճանապարհների տնօրինություն" ՊՈԱԿ-ի կողմից անց են կացվել Ասիական Զարգացման Բանկի աջակցությամբ ֆինանսավորվող, Հայաստանի Հանրապետության կառավարության "Գյուղական ճանապարհահատվածի ծրագրի" շրջանակներում Անտառամեջ-Զորավանք-Դպրաբակ-Այգուտ-Մարտունի-Գետիկ-Թթուջուր-Ճամբարակ-Աղբերք-Մ14 ավտոճանապարհի կմ15+240-ից կմ48+725 հատվածի (Լոտեր 1-ից 6) վերականգնման աշխատանքների գնման մրցույթներ:

Մրցութային հանձնաժողովի կողմից կատարված գնահատման արդյունքում առաջարկվել է հաղթող ճանաչել հետևյալ կազմակերպություններին՝

- **Լոտ 1-ին**

  "Իջևանի ՃՇՇ" ՓԲԸ՝ առաջարկված գինը 546 931 027 ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ը

- **Լոտ 2-րդ**

  "Կապավոր" ՍՊԸ՝ առաջարկված գինը 627 258 658 ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ը

- **Լոտ 3-րդ**

  "Կապավոր" ՍՊԸ՝ առաջարկված գինը 528 304 306 ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ը

- **Լոտ 4-րդ**

  "ԱԱԲ Պրոեկտ" ՍՊԸ՝առաջարկված գինը 424 890 038 ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ը

- **Լոտ 5-րդ**

“Խաչհար” ՍՊԸ `առաջարկված գինը 689 998 759 ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ը

- **Լոտ 6-րդ**

“Ճամբարակի ՃՇՇՁ” ԲԲԸ և “Խաչհար” ՍՊԸ համատեղ `առաջարկված գինը 594 999 930 ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ը:

Ասիական զարգացման բանկը 2010 թվականի հոկտեմբերի 15-ին հաստատել է մրցույթի արդյունքները:

2010 թվականի հոկտեմբերի 22-ին մրցույթների արդյունքները հաստատվել են Ասիական Զարգացման Բանկի և Համաշխարհային Բանկի կողմից Հայաստանի Հանրապետությանը տրամադրվող վարկային և դրամաշնորհային միջոցների հաշվին իրականացվող Գյուղական ճանապարհահատվածի ծրագրի և Կենսական նշանակության ճանապարհների բարելավման ծրագրի կառավարման խորհրդի կողմից:

Առանց վերոհիշյալ մրցույթների արդյունքների՝ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատման, շինարարական աշխատանքների կապալի պայմանագրերը չեն կարող կնքվել,քանի որ պայմանագրային արժեքները գերազանցում են մեկ միլիոն ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամի չափը :

1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները

Առաջարկվում է հաստատել Ասիական զարգացման բանկի աջակցությամբ ֆինանսավորվող “Գյուղական ճանապարհահատվածի ծրագրի” շրջանակներում Անտառամեջ-Զորավանք – Դպրաբակ – Այգուտ – Մարտունի –Գետիկ - Թթուջուր-Ճամբարակ-Աղբերք-Մ14 ավտոճանապարհի կմ15+240-ից կմ48+725 հատվածի (Լոտեր 1-ից 6) վերականգնման աշխատանքների գնման 2010 թվականի հոկտեմբերի 5-ին կայացած մրցույթների արդյունքները:

2. Կարգավորման առարկան

Որոշման նախագծի առարկան է Հայաստանի Հանրապետության կառավարության և Ասիական զարգացման բանկի համատեղ ֆինանսավորմամբ իրականացվող “Գյուղական ճանապարհահատվածի ծրագրի” շրջանակներում Անտառամեջ-Զորավանք-Դպրաբակ-Այգուտ-Մարտունի-Գետիկ-Թթուջուր-Ճամբարակ-Աղբերք-Մ14 ավտոճանապարհի կմ15+240-ից կմ48+725 հատվածի (Լոտեր 1-ից 6) վերականգնման շինարարական աշխատանքների կապալի պայմանագրերի կնքումը :

3. Իրավական ակտի կիրարկման դեպքում ակնկալվող արդյունքը

Որոշման կիրարկումը թույլ կտա սահմանված ժամկետներում (2010-2011թթ.) վերականգնել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզում գտնվող Անտառամեջ-Զորավանք – Դպրաբակ – Այգուտ – Մարտունի – Գետիկ - Թթուջուր-Ճամբարակ-Աղբերք-Մ14 ավտոճանապարհի կմ15+240-ից կմ48+725 հատվածը՝ շուրջ 33.5կմ երկարությամբ:

Մ.ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

Հայաստանի Հանրապետության կառավարության “Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող “Գյուղական ճանապարհահատվածի ծրագրի”շրջանակներում Անտառամեջ-Զորավանք-Դպրաբակ-Այգուտ-Մարտունի-Գետիկ-Թթուջուր-Ճամբարակ-Աղբերք-Մ14 ավտոճանապարհի կմ15+240-ից կմ48+725 հատվածի վերականգնման աշխատանքների գնման մրցույթների արդյունքները հաստատելու մասին” որոշման ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում փոփոխություններ կամ լրացումներ կատարելու

անհրաժեշտության մասին

Հայաստանի Հանրապետության կառավարության “Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող “Գյուղական ճանապարհահատվածի ծրագրի” շրջանակներում Անտառամեջ – Զորավանք – Դպրաբակ – Այգուտ – Մարտունի – Գետիկ – Թթուջուր –Ճամբարակ -Աղբերք-Մ14 ավտոճանապարհի կմ15+240-ից կմ48+725 հատվածի վերականգնման աշխատանքների •նման մրցույթների արդյունքները հաստատելու մասին” որոշման ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում փոփոխություններ կամ լրացումներ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

Մ.ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

Հայաստանի Հանրապետության կառավարության "Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող "Գյուղական ճանապարհահատվածի ծրագրի" շրջանակներում Անտառամեջ-Զորավանք-Դպրաբակ-Այգուտ-Մարտունի-Գետիկ-Թթուջուր-Ճամբարակ-Աղբերք-Մ14 ավտոճանապարհի կմ15+240-ից կմ48+725 հատվածի վերականգնման աշխատանքների գնման մրցույթների արդյունքները հաստատելու մասին" որոշման ընդունման կապակցությամբ պետական բյուջեում ծախսերի և եկամուտների ավելացման կամ նվազեցման մասին

Հայաստանի Հանրապետության կառավարության "Ասիական զար·ացման բանկի աջակցությամբ իրականացվող "Գյուղական ճանապարհահատվածի ծրագրի" շրջանակներում Անտառամեջ – Զորավանք – Դպրաբակ – Այգուտ – Մարտունի -Գետիկ-Թթուջուր-Ճամբարակ-Աղբերք-Մ14 ավտոճանապարհի կմ15+240-ից կմ48+725 հատվածի վերականգնման աշխատանքների գնման մրցույթների արդյունքները հաստատելու մասին" որոշման ընդունման կապակցությամբ պետական բյուջեում ծախսերի և եկամուտների ավելացում կամ նվազեցում, ինչպես նաև լրացուցիչ ֆինանսական միջոցների անհրաժեշտություն չի առաջացնում:

Մ.ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

Հայաստանի Հանրապետության կառավարության "Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող "Գյուղական ճանապարհահատվածի ծրագրի" շրջանակներում Անտառամեջ-Զորավանք-Դպրաբակ-Այգուտ-Մարտունի-Գետիկ-Թթուջուր-Ճամբարակ-Աղբերք-Մ14 ավտոճանապարհի կմ15+240-ից կմ48+725 հատվածի վերականգնման աշխատանքների գնման մրցույթների արդյունքները հաստատելու մասին" որոշման նախագծի վերաբերյալ շահագրգիռ նախարարություններից ստացված առաջարկությունների և առարկությունների վերաբերյալ

	Առարկության, առաջարկության հեղինակը/ առարկության, առաջարկության ստացման ամսաթիվը	Առաջարկության,առարկության բովանդակությունը	Եզրակացություն
1	2	3	4
1.	ՀՀ արդարադատության նախարարություն 16.04.2009թ. թիվ Ե 2088	Որոշման նախագծի վերաբերյալ ՀՀ արդարադատության նախարարությունն առաջարկությունները չունի:	
2.	ՀՀ ֆինանսների նախարարություն 15.04.2009թ. թիվ 12/5-141-2531	Որոշման նախագծի վերաբերյալ ՀՀ ֆինանսների նախարարությունն իր իրավասության շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունի:	

Մ.ՎԱՐԴԱՆՅԱՆ